Հաստատված է
ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
1999թ. դեկտեմբերի «28» №37 որոշմամբ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ

(արտադրող-մեծածախ գնորդ-վաճառող) *

« _____ » _____ 199__ թ. ք. _____

_____
(արտադրող ընկերության անվանումը)

_____,

այսուհետև՝ Վաճառող, ի դեմս _____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, մի կողմից, և _____

_____,
(ընկերության անվանումը)

այսուհետև՝ Գնորդ, ի դեմս _____

_____, որը,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, մյուս կողմից, այսուհետև համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. *Պայմանագրի առարկան*

1.1 Վաճառողը վաճառում, իսկ Գնորդը գնում է էլեկտրաէներգիա սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Կողմերի առևտրային փոխհարաբերությունները կանոնակարգվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի

* Սույն պայմանագիրը կնքվում է արտադրողի և «Հայէներգո» ՊՓԲԸ-ի միջև

Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն Պայմանագրով:

1.3 Գնորդի կազմում գտնվող կենտրոնական կարգավարական ծառայության (այսուհետև՝ ԿԿԾ) փոխհարաբերությունները Վաճառողի հետ, ինչպես նաև Վաճառողի և հաղորդողի փոխհարաբերությունները կանոնակարգվում են սահմանված իրավական ակտերով և պայմանագրերով:

*2. **Էլեկտրաէներգիայի սակագինը***

2.1 Վաճառողի առաքած էլեկտրաէներգիայի սակագինն է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) կողմից սահմանված_____ դրամ/կՎտժ (ներառյալ ԱԱՀ):

2.2 Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման դեպքում, մինչև նոր Պայմանագրի ուժի մեջ մտնելը, էլեկտրաէներգիայի նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի կողմից սահմանած ժամկետից:

*3. **Կողմերի պարտավորությունները***

3.1. Վաճառողը պարտավորվում է՝

3.1.1. Գնորդին առաքել էլեկտրաէներգիա սույն Պայմանագրի N1 հավելվածում նշված չափաքանակներով և ռեժիմներով, ներառյալ պահուստային հզորության ապահովումը և հուսալիության ցուցանիշների կատարումը:

3.1.2. Անհապաղ տեղեկացնել Գնորդին իր էլեկտրատեղակայանքներում տեղադրված առևտրային հաշվառքի սարքերի խափանման հայտնաբերման մասին և պայմաններ ստեղծել դրանք վերականգնելու ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Նշված ժամանակահատվածում հաշվառքի սարքերի չհաշվառված էլեկտրաէներգիայի քանակը հաշվել վերստուգիչ հաշվիչների ցուցմունքներով:

3.2. Գնորդը պարտավորվում է՝

3.2.1. Գնել Վաճառողի առաքած էլեկտրաէներգիան՝ սույն Պայմանագրի N1 հավելվածում նշված չափաքանակներով, հաշվի առնելով սահմանված կարգով կատարված փոփոխությունները.

3.2.2. Վճարել ստացած էլեկտրաէներգիայի արժեքը՝ սույն Պայմանագրին համապատասխան:

3.2.3. Վաճառողի համաձայնեցմանը ներկայացնել էլեկտրաէներգիայի և հզորության առաքման հաջորդ ամսվա պայմանագրային մեծությունների փոփոխման մասին առաջարկությունները՝ մինչև ընթացիկ ամսվա 25-ը:

3.2.4. Վաճառողին ներկայացնել էլեկտրաէներգիայի առաքման հաջորդ օրվա հայտը և բեռնվածքի օրական ժամանակացույցը՝ մինչև տվյալ օրվա ժամը 16^{00}- ն:

*4. **էլեկտրական էներգիայի քանակի չափումը***

4.1. Վճարման ենթակա էլեկտրաէներգիայի քանակ է համարվում Վաճառողի և հաղորդողի (բաշխողի) հաշվեկշռային պատկանելության սահմանազատման կետերում Գնորդին առաքված էլեկտրաէներգիան:

Հաշվեկշռային պատկանելության սահմանազատման կետերը, էլեկտրաէներգիայի առևտրային և վերստուգիչ հաշվիչների տեղադրման վայրը բերվում են սույն Պայմանագրին կից հաշվեկշռային պատկանելության սահմանազատման ակտում (հավելված N2): Առաքված էլեկտրաէներգիայի հաշվարկը կատարվում է ՀՀ էներգետիկայի նախարարության «էլեկտրաէներգիայի և հզորության հաշվառման հրահանգով» սահմանած կարգով:

4.2. Առևտրային հաշվառքի սարքերի ցուցմունքները գրանցվում են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից՝ համատեղ, հաշվարկային ամսվա վերջին օրվա ժ.___-ին, որի մասին կազմվում է երկկողմ ակտ (մեկական՝ Կողմերի համար) և հավելվում էլեկտրաէներգիայի առուվաճառքի ակտին (հավելված N4):

Կողմերից մեկի չներկայանալու դեպքում հաշվառքի սարքերի ցուցմունքների գրանցումը կատարվում է միակողմանի:

4.3. Գնորդին առաքված էլեկտրաէներգիայի համար Վաճառողի և Գնորդի միջև կազմվում է էլեկտրաէներգիայի առուվաճառքի ակտ (հավելված N3), որը Կողմերի հաստատումից հետո համարվում է իրավական փաստաթուղթ:

4.4. Վերստուգիչ հաշվիչները Վաճառողի և հաղորդողի (բաշխողի) հաշվեկշռային պատկանելության բաժանման սահմանից (սահմանազատման կետից) դուրս տեղադրելու դեպքում Գնորդին առաքված էլեկտրաէներգիայի փաստացի քանակը որոշելու համար վերստուգիչ հաշվիչներով հաշվառված էլեկտրաէներգիայի քանակին գումարվում (կամ նրանից հանվում) է հաշվիչների տեղադրման և հաշվեկշռային պատկանելության սահմանազատման կետերի միջև ընկած ցանցի տարրերում էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստի չափը:

Էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստի հաշվարկը կատարում է Վաճառողը և համաձայնեցնում Գնորդի հետ:

*5. **Վճարման կարգը***
*(**սահմանում են Կողմերը**)*

_____

_____

_____

_____

_____

*6. **Կողմերի պատասխանատվությունը***

6.1. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Վաճառողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված հուսալիության ցուցանիշների և պահուստային հզորության չապահովման հետևանքով Գնորդի կրած վնասը ենթակա է փոխհատուցման Վաճառողի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

*7. **Ֆորս-մաժորային իրավիճակներ***

7.1. Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների (տարերային աղետներ, ռազմական գործողություններ, էներգապաշարների (վառելիք, ջուր) մատակարարման համակարգերի, ազգային էլեկտրական ցանցի վթարներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ), տվյալ պայմաններում լիցենզավորված անձից անկախ առաջացած անհաղթահարելի ուժի հետևանքների, որոնք, մասամբ կամ ամբողջությամբ, անհնար են դարձնում լիցենզավորված գործունեության իրականացումը:

7.2. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

7.3. Ֆորս-մաժորի ավարտից հետո Կողմերը պարտավոր են անմիջապես ձեռնարկել միջոցներ՝ իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

7.4. Ֆորս-մաժորի սկիզբը և ավարտը հայտարարում է այդպիսի պայմանների առկայությունը գրանցող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը:

*8. **Լրացուցիչ պայմաններ***

8.1. Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերի ու դրանց միացման շղթաների ստուգումը և կապարակնքումը կատարվում է ՀՀ էներգետիկայի նախարարության 1998թ. հունիսի 9-ի N169-ԳՄ հրամանով հաստատված «Էլեկտրաէներգիայի և հզորության հաշվառման հրահանգով»:

8.2. Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերի սպասարկումը և շահագործումը կատարվում է Վաճառողի կամ Գնորդի (նրա լիազոր ներկայացուցչի) կողմից՝ ըստ հաշվեկշռային պատկանելության:

8.3. Էլեկտրաէներգիայի որակի հսկումը և գրանցումը կատարվում է՝

8.3.1. հաճախությունը՝ էներգահամակարգի ԿԿԾ-ում տեղակայված գրանցող հաճախաչափով.

8.3.2. լարումը՝ Վաճառողի հսկիչ կետերում տեղակայված գրանցող (չափիչ) սարքերով (հսկիչ կետերի ցանկը նշվում է N2 հավելվածում):

8.4. Էներգահամակարգի վթարային իրավիճակներում Գնորդն իրավունք ունի փոխել Վաճառողի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի և բեռնվածքի՝ սույն Պայմանագրով նախապես հաստատված ժամանակացույցերը՝ օգտագործելով սույն Պայմանագրով նախատեսված պահուստային հզորությունը:

Վթարային իրավիճակների սկիզբն ու ավարտը հաստատում է էներգահամակարգի ԿԿԾ-ն՝ այդ մասին տեղեկացնելով Վաճառողին:

8.5. Էներգահամակարգի վթարային իրավիճակները, որոնք ուղեկցվում են էլեկտրաէներգիայի որակական ցուցանիշների խախտմամբ, Գնորդը պետք է վերացնի ոչ ուշ, քան _____ րոպեում:

*9. **Վեճերի լուծումը***

9.1 Պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերը հնարավորության սահմաններում լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով, անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ, նրա կողմից սահմանված կարգով:

9.2 Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

*10. **Պայմանագրի գործողության ժամկետը և փոփոխման կարգը***

10.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի կողմից գրանցման պահից՝ _____ մինչև _____ 2000թ. գործողության ժամկետով:

10.2. Կողմերի նախաձեռնությամբ Պայմանագիրը կարող է վերանայվել միայն փոխադարձ համաձայնության դեպքում: Վերանայված Պայմանագիրը ենթակա է գրանցման Հանձնաժողովի կողմից:

10.3. Սույն Պայմանագիրը կազմված է երեք օրինակից՝ մեկական յուրաքանչյուր Կողմի և Հանձնաժողովի համար:

*11. **Հատուկ պայմաններ****

_____

_____

_____

_____

_____

_____

_____

* - չպետք է հակասի սույն Պայմանագրին, ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

*12. **Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցանկը***

Հավելված N1. Էլեկտրաէներգիայի և հզորության առաքման չափաքանակները

Հավելված N2. Հաշվեկշռային պատկանելության սահմանազատման ակտ

Հավելված N3. Էլեկտրաէներգիայի առուվաճառքի ակտ

Հավելված N4. Առևտրային և վերստուգիչ հաշվիչների ցուցմունքների գրանցման ակտ

*13. **Կողմերի իրավաբանական հասցեները և հաշվարկային համարները***

Գնորդ	Վաճառող
Հասցեն_____	Հասցեն_____
Հ/h _____	Հ/h _____
_____	_____
Հեռախոս	Հեռախոս
Հեռատիպ	Հեռատիպ
Ֆաքս	Ֆաքս
Գործունեության	Գործունեության

լիցենզիայի N լիցենզիայի N

Ղեկավար Ղեկավար

_____ _____

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ. Կ.Տ.

ՀՀ էներգետիկայի հանձնաժողով

Գրանցված է «___» _____ 199__ թ

Գրանցման N _____ Կ.Տ.

Պատասխանատու _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)